

ՀՕՄ-ի անդամներ կ'աջակցին Հաշմանդամ Զինուորներու Վերականգնողական Կեդրոնին

Նախօրօք յայտարարած էինք, թէ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանը, իր 10 մասնաճիւղերով, 10 անկողին կը նուիրէ Երեւանի ԹԻԼ 1 հիւանդանոցին եւ Հաշմանդամ Զինուորներու Վերականգնողական կեդրոնին, եւ մեր անդամներուն ու ազգայիններուն կոչ ուղղած ու խրախուսած էինք, որպէսզի իրենք ալ մասնակցին այս յոյժ կարեւոր ծրագրին:



Ընդառաջելով ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան կոչին, Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի անդամ ընկ՛հ. Շաքէ Կօչնճեան մէկ անկողին նուիրեց վերոյիշեալ ծրագրին:


Ընկերուհիներ Սեդա Թապազեան եւ Անի Սերոբեան, իրենք եւս մէկ անկողին կը նուիրեն, իրենց սիրեցեալ մօր՝ ընկ՛հ. Ալիս Տէր Ասատուրեանի յիշատակին:

Շրջանային Վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ ընկերուհիներ Շաքէ Կօչնճեանին, Սեդա Թապազեանին եւ Անի Սերոբեանին, իրենց մարդասիրական սոյն արարքին համար, եւ կը քաջալերէ մեր ազգայինները, որ հետեւելով անոնց օրինակին, իրենց նուիրատուութիւնները գրեն ARS FOUNDATION անունին եւ ուղարկեն հետեւեալ հասցէին՝

Armenian Relief Society of Canada (ARS) Inc.
3401 Olivar Asselin
Montreal, QC
H4J 1L5

Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Ծրջանային Վարչութիւն

Գանատայի մէջ տեղի պիտի ունենայ Հայաստանի Առաջին Հանրապետութեան Աուիւրուած Խորհրդածողով



Dr. Richard Hovannisian

Dr. Rubina Peroomian

Dr. Vicken Cheterian

ՀՅԴ «Արմէն Գարօ» Ուսանողական միութիւնը, համագործակցութեամբ Գանատայի զանազան հայ ուսանողական միութիւններու հետ, կազմակերպած է Հայաստանի Առաջին Հանրապետութեան նուիրուած Խորհրդածողով մը, որ տեղի պիտի ունենայ 2018-ի Մարտին:

Խորհրդածողովի զեկուցաբերներն են UCLA համալսարանի փրոֆեսոր եւ պատմաբան դոկտոր Ռիչըրտ Յովհաննիսեան, UCLA համալսարանի փրոֆեսոր, հեղինակ եւ գիտաշխատող դոկտոր Ռուբինա Փերումեան եւ Ժընեւի Webster համալսարանի փրոֆեսոր եւ լրագրող դոկտոր Վիգէն Չըթըրեան:

Ժամանակացոյց.

13 Մարտ, երեկոյեան ժամը 7:00, Մոնթրէալ, McGill համալսարան

14 Մարտ, երեկոյեան ժամը 7:00, Օթթաուա, Carlton համալսարան

15 Մարտ, երեկոյեան ժամը 7:00, Թորոնթօ, University of Toronto

Կազմակերպող Ուսանողական միութիւններն են.

«Արմէն Գարօ» Ուսանողական միութիւն, Université de Montréal-ի Հայ Ուսանողներու միութիւն, Concordia-ի Հայ Ուսանողներու միութիւն, McGill-ի Հայ Ուսանողներու միութիւն, Carlton University of Ottawa-ի Հայ Ուսանողներու միութիւն, Council of Ontario-ի Հայ Ուսանողներու միութիւն, University of Toronto Scarborough Campus-ի Հայ Ուսանողներու միութիւն, University of Toronto St. George Campus-ի Հայ Ուսանողներու միութիւն, Ryerson University-ի Հայ Ուսանողներու միութիւն, York University-ի Հայ Ուսանողներու միութիւն, McMaster University-ի Հայ Ուսանողներու միութիւն:

ՀՅԴ ԳՊՄ հաղորդագրութիւն. Մայիսեան, Փետրուարեան եւ Արցախեան

Դաշնակցական պատանիին համար անհրաժեշտ է իրազեկ ըլլալ իր ժողովուրդի անցեալին, որովհետեւ, ներկայ իրադրութիւններու լաւագոյն ընկալման համար, յաճախ պէտք է դիմել անցեալին: Արցախեան հիմնահարցը ներկան է, սակայն անոր արժանաբար կը զան անցեալէն...



(Կարդալ էջ 3)



Always standing by our community

SINCE 1997

Komitas.ca
FUNERAL COMPLEX

PRE-PLANNING WITH 0% INTEREST
1, 3, 5 OR 10 YEAR PAYMENT PLANS

T 514.331.0400



2018 PILOT MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4


514 327-7777
www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



HONDA

Les saveurs de la méditerranannée...
le bon goût du partage !



Suivez-nous !



www.groupeadonis.ca



MARCHÉ

ADONIS

Յայտարարութիւն՝ «Հայ Հորիզոն» հեռուստաժամի

Մերելի՛ հեռուստադիտողներ
Ուրախ լուր մը ունինք, զոր կ'ուզենք բաժնեկցիլ ձեզի հետ: Ընդառաջելով ձեր փափաքին, երկար աշխատանքէ ետք, վերջապէս կարելի պիտի ըլլայ «Հայ Հորիզոն» յայտագրի տեւողութիւնը բարձրացնել կէս ժամէն մէկ ժամի: Այս փոփոխութիւնը կը նախատեսենք սկսիլ Մարտ 5-ի շաբաթը: Ուրեմն, մեր առաջին սփռումէն ետք, այսուհետեւ մեր հաղորդումներու առաջին սփռումը պիտի կատարուի ամէն Երեքշաբթի, երեկոները ժամը 9-ին, փոխան Շաբաթ առաւօտեան: Շաբթուան մնացեալ օրերը յայտագիրը պիտի կրկնուի տարբեր ժամերու:

Նման փոփոխութիւն անշուշտ կ'ենթադրէ նաեւ յաւելեալ ծախս: Այս անհրաժեշտութենէն մեկնելով՝ կը դիմենք ձեզի, սիրելիներ, որ ձեր կարողութեան սահմանին մէջ մասնակից դառնաք Մոնթրէալի հայկական հեռուստաժամը առաւել եւս ընդլայնելու այս յառաջընթացին: Ձեր նուիրատուութիւնները կրնաք ընել որեւէ գումարով, պարզապէս այցելելով www.youcaring.com/hayhorizon էջը եւ սեղմելով սոյն էջին վրայ գտնուող Donate կոճակը: Մեր նուիրատուներուն անունները պիտի հրատարակուին կայքէջին մէջ, ինչպէս նաեւ իւրաքանչիւր սփռումի աւարտին: Իսկ եթէ կը նախընտրէք ձեր նուիրատուութիւնը կատարել վճարագրով, հաճեցէք ուղարկել զայն հետեւեալ հասցէին՝ Sev-Sar Productions, 890 rue Gouin, Laval, QC, H7X3H4.

«Հայ Հորիզոն»-ի անձնակազմին անունով թոյլ տուէք շնորհակալութիւն յայտնել մեր բոլոր հովանաւորներուն, ինչպէս նաեւ բոլոր այն միութիւններուն, որոնք իրենց ձեռնարկները կը ծանուցեն յայտագրին միջոցաւ: Առանց անոնց, Մեծն Մոնթրէալի մէջ կարելի պիտի չըլլար իրականութիւն դարձնել հայկական յայտագիր ունենալու երազանքը: Իսկ կէս ժամը մէկ ժամի վերածելու երկար սպասուած այս առիթը կրնանք իրագործել միայն ձեր օժանդակութեամբ:

Կանխաւ շնորհակալութիւն ձեր քաջալերանքին համար:

ՀՅԴ ԳՊՄ հաղորդագրութիւն. Մայիսեան, Փետրուարեան եւ Արցախեան

Դաշնակցական պատանիին համար անհրաժեշտ է իրազեկ ըլլալ իր ժողովուրդի անցեալին, որովհետեւ, ներկայ իրադրութիւններու լաւագոյն ընկալման համար, յաճախ պէտք է դիմել անցեալին: Արցախեան հիմնահարցը ներկան է, սակայն անոր արժատները կու գան անցեալէն՝ Մայիս 1918-էն եւ Փետրուար 1921-էն:

1920-ի վերջերը, Հայաստանի անկախ հանրապետութեան փոթորկալի երկուքուկէս տարիները անբարենպաստ զարգացումներու հասան: Անկախ Հայաստանի կառավարութիւնը, որ Դաշնակցութեան կողմէ կը ղեկավարուէր, իբրեւ չարեաց փոքրագոյն՝ երկիրը մեծ ցնցումներէ եւ մարդկային կորուստներէ փրկելու նպատակով, իշխանութիւնը խաղաղ կերպով փոխանցեց Խորհրդային Միութեան: Բայց խոստումնազրուծ այդ միութիւնը ձեռնարկեց նախկին իշխանութեան ղեկավարներու հետապնդման, ձերբակալութիւններու եւ հակադաշնակցական քարոզչութեան, ինչ որ ժողովուրդը մղեց ապստամբութեան: Եւ Հայ ժողովուրդի ծոցէն ծնած Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը անգամ մը եւս ստանձնեց ղեկավարի դերը եւ հանդէս եկաւ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի, ինչպէս նաեւ ազգային միասնութեան եւ ազատութեան զաղափարներ մարմնաւորողի դերով: Արցախեան գոյամարտն ալ խորհուրդ մը կը ներառէ Փետրուարեան ապստամբութեան ոգիէն:

Տարին կը յատկանշուի մեր նորօրեայ պատմութեան ամենապանծալի յաղթանակի եւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծման 100-ամեակի յօրհանումով: Այս տարի հպարտութեամբ կը տօնենք նաեւ Արցախեան ազատամարտի 30-ամեակը: Արդ, Գանատայի Պատանեկան Միութիւնները իրենց հերթական ժողովներուն ընթացքին մօտէն կը ծանօթանան մեր ժողովուրդի անցեալին՝ պատմութեան տարբեր զարգացումներուն, կը գինուին Մայիսեան, Փետրուարեան եւ Արցախեան հերոսամարտերու ոգիով եւ, այդ պատճառով ալ, իւրաքանչիւր տարուան Փետրուարէն Ապրիլ երկարող ժամանակահատուածին, կը մասնակցին եւ կը կազմակերպեն Մայիսեան Հերոսամարտերուն, Փետրուարեան Ապստամբութեան եւ Արցախեան Գոյամարտի Սկզբնաւորման նուիրուած ձեռնարկներ, որոնք մեր մամուլով կը ծանուցուին: Այժմ կը պատրաստուին Մայիսեան Հարիւրամեակին նուիրուած տարեկան սեմինարին՝ Մայիս 11-13:

Մեր «ապստամբութիւնները» սակայն չենք տօնակատարեր միայն տարին անգամ մը: Մեր պատանիները կը դաստիարակուին այնպէս, որ ապստամբին համալիրահայնացման եւ օտարամոլութեան վտանգին դէմ, ապստամբին թրքական եւ ազերիական հակահայ քարոզչութեան դէմ, մանաւանդ Հիւսիսային Ամերիկայի մէջ, ապստամբին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործունէութիւնը քննադատող ու անոր դէմ քար դնողներուն դէմ, ապստամբին հայօրէն, ապստամբին դաշնակցականօրէն:

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութիւններու Ընդհանուր Վարիչ Մարմին

«Հայ Հորիզոն» հեռուստադիտողները կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

| | |
|---------------------------------------|--|
| Videotron: HD616 կամ SD16 | Շաբաթ- առաւօտեան ժամը 8:30-ին (առաջին սփռում) |
| Bell Fibe: HD1216 կամ SD216 | Հինգշաբթի- երեկոյեան ժամը 8:30-ին |
| | Ուղիղ արձակում՝ www.icitelevision |

| | | |
|---|--|--|
| <p>Linda Kharaboyan Notaire Notary</p> <p>Ձեր նստարանն ու իրաւաբանական հարցերն ու ծրագրերը վստահեցէ՛ մեզի</p> <p>Vos affaires. À cœur.</p> <p>Therrien Couture 3111, boul. Saint-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2 t. 450 682.5514 - 855 633.6326 linda.kharaboyan@therriencouture.com therriencouture.com</p> | <p>VIZUALIS optométriste</p> <p>DR SHANT DONABEDIAN</p> <p>Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire</p> <p>514 695 2555 - VIZUALIS.CA</p> | <p>PHOTO Cristal</p> <p>(514) 744 4313</p> <p>Berj Merdjanian</p> <p>Mariage - Portrait - Graduation Restauration - Commercial - Passeport Publicité - Lamination - Encadrement</p> <p>Video - Reproduction</p> <p>647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3 photocrystal@hotmail.com www.photocrystal.com</p> |
| <p>Assura Bien inc.</p> <p>Cabinet en assurance de dommages et de services financiers</p> <p>Ապահովագրական գրասենեակ</p> <p>KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN</p> <p>970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7 T: 514.903.3999</p> | <p>RITA BAGHDASSARIAN</p> <p>Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager</p> <p>COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELL) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT</p> <p>3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com</p> | <p>TAXI MIRABEL 450-430-2650</p> <p>Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի 20 հայ թաքսի վարորդի Միլանի 2009 շրջանին մէջ: Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:</p> <p>Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. Call/Appelez: (514) 979 1317</p> |
| <p>RE/MAX RE/MAX 3000 inc. Agence Immobilière</p> <p>Elie Berberian Courtier immobilier Real Estate Broker C 514.519.3543 B 514.333.3000</p> | <p>ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN</p> <p>POSE D'ONGLES RÉSINE ET POUFRE MANICURE & PÉDICURE AVEC GEL RECOUVREMENT SUR ONGLES NATURELS</p> <p>Վտոնջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝ 514 941-0014 LAVAL</p> | <p>KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker</p> <p>Life Insurance • Disability & Critical Illness Insurance Group Insurance • Pension Plans Travel/Visitor Medical Insurance</p> <p>11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666 krikormar@gmail.com</p> |
| <p>FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES</p> <p>SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL</p> <p>BEDROS NALPATIAN</p> <p>442, LA RIVIÈRE, LAVAL, QC. TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM</p> | <p>CENTUM Mortgage programs for new comers to Canada New purchases Refinancing Second mortgages Self employed Low credit score Access to top lenders including private lenders</p> <p>416.662.6650 cell centum.ca/sosie_demersesian</p> | <p>180, rue Fleury ouest Montréal, Qc, H3L1T5</p> <p>T 514.382.7222 F 514.381.1818</p> <p>ALINE BEKEREJIAN NOTAIRE - NOTARY</p> <p>aline.b@notarius.net www.abnotaires.com</p> <p>Նստար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան</p> |

Վարդանանց հերոսամարտի տօնակատարություն Թորոնթոյի մէջ

Կազմակերպութեամբ Թորոնթոյի Հայ Առաքելական, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական եկեղեցիներու Միացեալ մարմին, Հինգշաբթի, 8 Փետրուար 2018-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Թորոնթոյի Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Վարդանանց Հերոսամարտի եւ հազար երեսունվեց սրբացած վկաներուն 1567-ամեակի նշումը՝ հաւաքական աղօթքով եւ պատշաճ հանդիսութեամբ:

Տօնակատարութեան ներկայ էին Գերշ. եղիա Մ. Վրդ. Քիրէճեան՝ հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ, Արժ. Տ. Զարեհ Աւագ Քհն. Զարգարեան՝ Գանատահայոց թեմի Փոխառաջնորդ եւ հովիւ Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. եկեղեցւոյ, Արժ. Տ. Կոմիտաս Աւագ Քհն. Փանոսեան՝ ծխատէր հովիւ Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ, տիրա Տիգրան Գալայճեան՝ ատենապետ Հայ Աւետարանական եկեղեցւոյ վարչութեան, ինչպէս նաեւ մեծ թիւով հաւատացեալներ, որոնք եկած էին հաղորդուելու Վարդանանցի խորհուրդով:

Յանուն Միջ Յարանուանական Մարմնի, ատենապետ տիրա Յակոբ Ծամպագեան ելոյթ ունենալով ըսաւ. «Ձեր անգին արտօնութեամբը պիտի շեղիմ մեր յայտագրի ընթացքէն, համեստ անդրադարձ մը ունենալու մեզմէ առյաւէտ բաժնուած պըն. Սարգիս Համպոյեանի յիշատակին: Պըն. Համպոյեան ծնաւ հայ ժողովուրդի պատմութեան ամենէն դժուարին օրերուն: Ան եղաւ մեր ազգային, հոգեւոր, կրթական, մշակութային կառոյցներուն եւ մանաւանդ հայ երգի ու երաժշտութեան ծառայութեան ու նուիրումի ոգին մարմնաւորող անձնաւորութիւն մը: Իր մահով թորոնթոհայ գաղութը ընդհանրապէս եւ Միջ Յարանուանական Մարմինը՝ մասնաւորապէս, պիտի փնտռէ իր քաղցր ժպտը, եւ նուիրեալ խմբավարը՝ «Նախիրի» երգչախումբին»: Խօսքի աւարտին պըն. Ծամպագեան հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգելու յիշատակը նորոգ հանգուցեալ տիրա Սարգիս Համպոյեանին եւ ի յարգանք անոր՝ մոմ մը վառած մնաց հանդիսութեան ընթացքին:

Բացման խօսքով հանդէս եկաւ Գերշ. եղիա Մ. Վրդ. Քիրէճեան, որուն

ընթացքին շեշտեց. «Հայաստանի Հանրապետութեան Առաջին Անկախութեան 100-ամեակի այս տարին (2018), Վարդանանց ոգեկոչումը կը ղօղանջէ նոյն պատգամով, կը զգենու նոյն խորհուրդով եւ կը վերանորոգէ նոյն ուխտը համասփիւռ հայութեան»:

Յայտագրի սկսաւ հաւաքական Տէրունական աղօթքով, որուն յաջորդեցին Ս. Գրային ընթերցումները ներկայ հոգեւորականներու կողմէ: Առաջնորդութեամբ Արժ. Տ. Կոմիտաս Աւագ Քհն. Փանոսեանի, դաշնակի ընկերակցութեամբ Սոնա Յովսէփեանի եւ մասնակցութեամբ ներկայ հաւատացեալներուն՝ խմբերգուեցաւ «Շարական Սրբոց Վարդանանց»ը, Արմինիա Սարգիսեան մեներգեց Հայր Ղեւոնդ Ալիշանի «Պալուս Աւարայարի» եւ «Ամէն հայի» հայկական մեղեդիները: Տուտուկով ելոյթ ունեցաւ Սէյրան Ղազարեան, ստեղնաշարային գործիքի ընկերակցութեամբ՝ Նուէր Ղազարեանի, ապա Սոնա Յովսէփեան մեներգեց «Հայաստան Աշխարհ»ը: Ներկաները ծափահարութիւններով զնահատեցին գեղարուեստական յայտագրի մաս կազմողները:

Գերշ. Տ. եղիա Մ. Վրդ. Քիրէճեան ներկայացուց օրուան բանախօսը՝ Օնթարիոյի Հայ Բժիշկներու ընկերակցութեան (ACMAO) նախագահ տղթ. Անի Հասրըճեանը եւ տուաւ անոր կենսագրական գիծերը: Տղթ. Անի Հասրըճեան ծնած է Այնճար, Լիբանան: Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով ուսումը շարունակած է Միացեալ Նահանգներ-Գալիֆորնիա եւ վկայուած՝ Պսակաւոր Գիտութեանց (Bachelor of Science) տիտղոսով: Վկայուած է University of Toronto-էն որպէս ատամնաբոյժ: Անդամ է ՀՕՄ-ի եւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան եւ կամաւոր թղթակից՝ «Թորոնթոհայ» ամսաթերթին: Իր գործօն մասնակցութիւնը բերած է Օնթարիոյի Գանատահայ Բժշկական Ընկերակցութեան՝ 1988-ին հիմնադրութենէն ի վեր, նախ որպէս ուսանող անդամ, ապա վարչական եւ ներկայիս՝ որպէս նախագահ: Ընկերակցութեան ջանքերով Արցախի մէջ հիմնուած ատամնաբուժարաններուն իր տարեկան յաճախակի այցելութիւններով մասնակցած է առողջապահական եւ մարդասիրական նուիրական



աշխատանքներուն: Տղթ. Անի Հասրըճեանի նախաձեռնութեամբ եւ ջանքերով Արցախի հեռատեսիլի «Առողջ Ապրենք» յայտագրին վրայ աւելցուած է «Ատամներու եւ լինտի հիւանդութիւններու կանխարգելում» հաղորդաշարը: Ան նաեւ վարչական անդամ է Համաշխարհային Հայ Բժշկական Խորհուրդին:

Ամուսնանալով Լեւոն Հասրըճեանի հետ հաստատուած է Թորոնթօ, Գանատա: Ունի երեք զաւակներ՝ Արագ, Գալար եւ Կարէն:

Իր խօսքին մէջ տղթ. Հասրըճեան նախ ակնարկ մը նետեց Վարդանանց հերոսամարտին եւ ըսաւ. «Մշտանորոգ ոգեկոչութեամբ Վարդանանց պատերազմ-գոյամարտի տարեկան նշումը հայ ժողովուրդի լինելութեան խորհրդանշական հաւատքն է: Վարդանանցի «Վասն կրօնի, վասն հայրենեաց» նաշնաբանով տէր կանգնինք մեր սրբավայրերուն, թեւ ու թիկունք տանք մեր հայ գինուորին, որ կը շարունակէ օր եւ գիշեր իր կեանքը վտանգելով պաշտպանել մեր սահմանները: Կը հաւատամ, որ եթէ մեր յարգանքը եւ Վարդանանցի յաւերժօրէն գոյատեւելու անքակտելի կամքը առօրեայ պաշտամունք չզարձենք, ո՛չ միայն դպրոցներուն եւ եկեղեցիներուն մէջ, այլ մասնաւորապէս մեր տուններէն ներս, չգիտակցինք, թէ հայրենիքէն հեռու մեր մայրենի լեզուն է, որ դարեր շարունակ մեր ինքնութիւնն ու մշակոյթը պաշտպանող միակ զէնքն է, տարին անգամ մը միայն այսպէս տօնախմբուելը կը դառնայ անիմաստ»: Տղթ. Հասրըճեան իր խօսքը աւարտեց ըսելով. «Իւրաքանչիւրս հաւատքը եւ խոնարհութիւնը ունենանք հայկական ինքնութեան ջահը վառ պահելով փոխանցելու յաջորդ սերունդին: Ըլլանք լաւատես ու աշխատասէր. մեր ուսումնի եւ գիտելիքներու պաշարով սպառազինուած, ունենանք աննկուն կամք՝ յաղթահարելու դժուարութիւնները եւ յաւիտեան անմար պահելու հայապահպանման ջահը: Հայաստանի Առաջին Հանրապետութեան

Անկախութեան 100-ամեակի այս յատկանշական տարուան սեմին, «Վասն Քրիստոսի, Վասն հայրենեաց, յառա՛ջ» Վարդանանցի կարգախօսի ոգիով եկէ՛ք ուխտենք եւ քալենք դէպի լուսաշող ապագայ, թեւ ու թիկունք կանգնելով մեր հայրենիքին, Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի տեսլականով»:

Ներկաները ծափահարութիւններով զնահատեցին տղթ. Հասրըճեանի բանախօսութիւնը:

Բակման խօսքով հանդէս եկաւ Արժ. Տ. Զարեհ Աւագ Քհն. Զարգարեան, որ ուրախութեամբ ներկաներուն յայտնեց Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից տօնին առթիւ զանատահայ հոգեւորականներու համերաշխ ու յաջող հաւաքին մասին, որ տեղի ունեցած էր Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ եկեղեցւոյ հիւրընկալութեամբ, եւ փոխանցեց իր սրտի խօսքը՝ յաւերժացնելով Վարդանանց նահատակներու սրբազան օրինակը: Խօսքի աւարտին կազմակերպիչ մարմնի անունով շնորհակալութիւն յայտնեց հիւրընկալ Հայ Աւետարանական եկեղեցւոյ վարչութեան եւ եկեղեցւոյ Կանանց յանձնախումբին, շնորհաւորեց սոյն ձեռնարկը կազմակերպող Միջ Յարանուանական Մարմնի անդամներու համագործակցութիւնը, ինչպէս նաեւ օրուան բանախօս տղթ. Անի Հասրըճեանը՝ իր խորիմաստ խօսքերուն համար, եւ գեղարուեստական յայտագրին մաս կազմողները: «Աղօթք ի Տօն Մարտիրոսաց»ը ընթերցեցին Հայր եղիա Մ. Վրդ. Քիրէճեան, Արժ. Տ. Զարեհ Աւագ Քհն. Զարգարեան, Արժ. Տ. Կոմիտաս Աւագ Քհն. Փանոսեան եւ Վեր. Եսայի Սարմազեան:

Գերշ. եղիա Մ. Վրդ. Քիրէճեանի «Պահպանիչ»ով եւ Տէրունական աղօթքի երգեցողութեամբ ձեռնարկը իր աւարտին հասաւ, որմէ ետք եկեղեցւոյ «Մովսէս Ծամպագեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Մատաթ Բ. Մամուրեան

AETERNA
Complexe funéraire • Crématorium
Funeral Complex • Crematorium

ComplexeAeterna.com
1 877 299-1889

FOR A CONTEMPORARY CEREMONY
New alternative in funeral services in Montreal

POUR UNE CÉRÉMONIE CONTEMPORAINE
Nouvelle alternative dans le domaine funéraire à Montréal

Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝

ՎԱՆԳՈՒՎՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00

ՄՈՆԹՐԵԱՆ- «Յայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00
Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30
Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00
«Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

ՂԱՄԻԼՈՐԸ- «Յայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca

Համազգայինի «Սանահին» մասնաճյուղի Ամանորի աւանդական խրախճանքը

Համազգայինի «Սանահին» մասնաճյուղի աւանդական դարձած Ամանորի խրախճանքը այս տարի տեղի ունեցաւ Յունուար 20-ին, Յունուար 12-13-ի ահաւոր ձիւնամրրիկին պատճառով: Ներկայ էին մասնաճյուղի 250 համազգայնականներ, որոնք կը գործեն Համազգայինի գանազան ճիւղերուն մէջ. «Անի պարախումբ», «Պետրոս Աղամեան» թատերախումբ, «Քնար» երգչախումբ, «Գրատարած-Գրադարան», «Փոքրերու պատմութեան ժամ», «Սուրճ, թէյ եւ կարծիքներ», «Սանահին Ֆիլմի ակումբ», «Նանոր» մանկապատանեկան երգչախումբ: Ներկայ էին նաեւ շրջանային եւ տեղական վարչութեան անդամներն ու Համազգայինի հաւատարմ բարեկամները:

Ընկճ. Թամար Շահինեան-Փոլատեանի բացման խօսքէն ետք, ընթրիքի մատակարարման հետ սկսաւ գիրար շնորհաւորելու, սեղանէ սեղան այցելութիւններ տալու գուրմթ պահը:

«Նանոր» մանկապատանեկան երգչախումբը իր առաջին քայլերը համերգով մը պսակելէ ետք, մեզի հրամ-

ացուց Ամանորին եւ Կաղանդ պապուկին նուիրուած երգեր, ընկճ. Լուսին Ժամկոչեանի ղեկավարութեամբ, իսկ ամուսնացող երկուսն էլ ընկճ. Նանոր Մնայեանը, ընկճ. Անահիտ Պալեանը, ընկճ. Գարեգին Կիւրճեանը ու ընկճ. Ղազար Գալաճեանը, իսկ Լորա Պէրպէրեանը՝ իր առինքնող ձայնով հմայեց բոլորը:

Ընթրիքէն ետք, գուրմթութիւններով եւ խաղերով ստեղծուեցաւ այն տաքուկ ու հաղորդական մթնոլորտը, որ յատուկ է մեր անդամներին Ամանորի խրախճանքներուն: Ընկճ. Թամարը, չուսացաւ յատուկ շնորհակալական խօսքերով գնահատելու բոլոր նուիրատուները: Վիճակահանութիւնէն առաջ, խօսք առաւ ընկճ. Շահինեանը՝ պարգեւատրելու համար երկար տարիներու ընթացքին անձնուիրաբար գործող ընկերուհի Ռիթա Շամիանը, որ ներկայ էր իր ամուսնոյն եւ զաւակներուն հետ:

«Յաճախ, երբ կ'ուզենք պարգեւատրել Համազգայինին անսակարկ նուիրեալ մը, շնորհակալ ըլլալ՝ յարատեւօրէն մեր կողքին կանգնելուն հա-




մար,- կը նշէր վարչութեան ատենապետուհի ընկճ. Թամարը,- կը սկսինք հետազօտութեան մը, տեսակ մը՝ մարդորութեան: Համազգայնականի արժանիքներու շարան մը ունինք եւ այդ ցուցակով կողմնորոշուելով փորձած ենք մեր մէջէն ճիշդ Մարդը գտնել, մեր համազգայնականի սրտի խօսքը ըսելու, գնահատելու մեզի այդպէս առատօրէն իր բաշխածը...: Այդ որոնումին իբրեւ արգիւնք՝ գտանք մեր շուքին պէս մեզի հետեւողը, մեր իւրաքանչիւր խնդրանքը սիրով ու անսակարկ նուիրումով կատարողը: Ան ամէն տեղ է, Շրջանայինի թէ տեղական վարչութեան երկարատեւ տարիներու անդամ է, երգիչ-երգչուհիներու, երգչախումբի թէ ամուսնացողներու իր դաշնակով անզուգական ընկերակցողը, անձնուիրաբար մասնակցողը Համազգայինի բոլոր ձեռնարկներու կազմակերպչական աշխատանքներուն,

եւ տակաւին շարքը երկար է...: Ընկերուհի ծնած է Լիբանան, աւարտած է Լիբանանի Պետական եւ Քաղաքի երաժշտանոցները, որպէս դաշնակահարուհի, ապա Մոնթրէալի UQAM — երաժշտանոցէն ձեռք կը բերէ տեղական վկայական: Երկար տարիներ ծառայած է Լիբանանի ԼՕԽ-ի, ՀՄԸՄ-ի եւ Համազգայինի եւ ստանձնած՝ պատասխանատու պաշտօններ: Ընկերուհին «Սանահին» մասնաճյուղին որպէս անդամ, երկար տարիներու ընթացքին Համազգայինի «Քնար» երգչախումբին ոգի ի բռնի նուիրուած դաշնակահարուհի եղած է եւ է»:

Ընկերուհի Թամար ապա աւելցուց. «Ընկերուհի Ռիթա, Համազգայինը հպարտ է ձեզմով, եւ կը մաղթէ, որ ձեր օրինակը, ձեր տեսակը ըլլայ վարակիչ՝ բոլոր սերունդներուն համար: Ձեր վարձքը կատար»:

Վարդի Դանիէլեան

| | |
|---|---|
| <p>Այցելեցե՛ք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցե՛ք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը</p> <p>HITUNES.CA</p> | <p>Ունկնդրեցե՛ք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հիւնգալի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցե՛ք շահեկան հարցազրոյցներ</p> <p>TRIKTRAK.CA</p> |
|---|---|



ՅՕՄ-ի Մոնթրէալի Սուրբ մասնաճյուղի ընկերային ծառայութեան գրասենեակը բաց է ամէն Զորեքշաբթի ժամը 12:00-էն 4:00:

Այլ օր ժամադրուելու համար հեռաձայնել 514 335-2222 թիւին:



Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱՒԱԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677



Ghadir Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com



BAKERY AND FINE FOODS

OPEN 7 DAYS A WEEK!
WEDNESDAY 9 AM - 7 PM
SATURDAY 8 AM - 6 PM
SUNDAY 8 AM - 5 PM

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN



Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337



ANI Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5



Sutton
Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbedian@hotmail.com
www.suttongroupadmiral.com



hearing aid source

Andre Ayzvazyan HIS.B.A.S

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9



Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON. M1R 2Z5
Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com



I.D.A.
Part of the **Boyer** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.
2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**



ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8
Tel: 416.285.7164

COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



**TRY HEARING AIDS
RISK-FREE**

Call 416 754-4327

699 Coxwell Avenue
Toronto, ON M4C 3C1
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,
#65 Toronto, ON, M1R 4B9
Tel: 416 754-4327(HEAR)

www.hearingaidsource.ca



- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Oticon Canada Ltd.



hearing aid source

invisible, custom & comfortable



Centennial of the Republic of Armenia 1918-2018

From Genocide to Statehood - *The 900 Day Republic*

Tuesday March 13 - 7pm - McGill University, Montreal
 Wednesday March 14 - 7pm - Carleton University, Ottawa
 Thursday March 15 - 7pm - University of Toronto, Toronto

- All events are followed by a reception -

Guest Speakers



Dr. Richard Hovannisian

Historian
 Professor Emeritus
 UCLA



Dr. Rubina Perroomian


Author
 Professor/Researcher
 UCLA



Dr. Vicken Cheterian

Journalist
 Professor
 Webster University, Geneva

Conferences organized by the Armenian Student Associations of Quebec and Ontario





TEAM
AMY ASSAAD

CHARTERED REAL ESTATE BROKER

1% PREMIER DES COURTIERS
0 AU CANADA
AVEC ROYAL LEPAGE

N°2 ÉQUIPE AU
QUÉBEC
AVEC ROYAL LEPAGE

514.934.1818



1475 CH. DUMFRIES, MONT-ROYAL
\$5,200,000*
Lot: 9 892sf. 4+1 bdr. 5+2 bath. Garage (2)



SOLD
885 BOUL. LAIRD, MONT-ROYAL
\$1,995,000*
Lot: 11 345sf. 5+2 bdr. 3+1 bath. Garage (2)



203 RUE THORNHILL, DOLLARDS-DES ORMEAUX
599 000\$*
Lot: 6 510sf. 4+1 bdr. 2+1 bath. Garage



SOLD
2857 RUE GAÉTAN-LABRÈCHE, ST-LAURENT
\$879,000*
Lot: 5 675sf. 3+3 bdr. 3+1 bath. Garage



900 80E AVENUE, CHOMEDEY (LAVAL)
\$164,000 to \$322,900 +gst/qst*
LA TOUR ARYA | CONDOS 1-3 bdr



SOLD
104 RUE LAPORTE, DOLLARDS-DES ORMEAUX
\$789,000*
Lot: 6 512sf. 6+3 bdr. 4+2 bath. Garage (2)

TAMAR CHUJUNIAN



KARLA GARABEDIAN



WWW.MONTREALHOUSES.CA
FOR MORE INFO CONTACT US
TEL: 514-934-1818
EMAIL: info@amyassaad.ca

*PRIX DEMANDÉ



**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի մինչև ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստում.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարան. Դեղերու պատուաստում
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝
արեան բարակութեան (INR), շնչերակային
ճնշման (tension artérielle), արեան շաքարի
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի
(cholesterol), և այլն.

ԼՈՐԻ ԵՒ ՋԱԻԱԽԵՐ ԿՐԿՍՈՒՄ

«Գրասենյակ»
Բ.Բ.Ղ. Գանատի Կերրիանան Կուբելիան
Բ.Օ.Մ. Ի. Գանատի Կերրիանան Կուբելիան
Բ.Օ.Մ. Գանատի Կերրիանան Կուբելիան Կոլեգիալ Վարչություն
Բ.Բ.Ղ. Գանատի Կերրիանան Կուբելիան Կոլեգիալ Վարչություն
Բ.Բ.Ղ. Գանատի Կերրիանան Կուբելիան Կոլեգիալ Վարչություն

ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ի նպատակով
ԼՈՐԻ ԵՒ ՋԱԻԱԽԵՐ ԵՐԳԱՆՆԵՐՈՒՄ

Մուտքի նույն \$25
այ՛ խմբի անդամ ձեր համար

ԹՈՐՈՆՏՈ
Տարեթիվ 17 Մայիս 2018-ի
ընկերության ժամը 8-ին
Քայլ Կեղրոնի Արևիկի մեջ
45 Hazelton Place, Toronto
Տեղեկություն համար դիմել
Քոսթի Նանդաբեանին
416-498-6941

ՄՈՆՏՐԵԱԼ
Կիրակի 18 Մայիս 2018-ի
ընկերության ժամը 8-ին
«Բարսիլոնա» Արևիկի մեջ
3400 Rue Nelson, Montreal
Տեղեկություն համար դիմել
Մարթա Ֆրանկեանին
514-748-7137

ԼՈՐԻ

ՋԱԻԱԽԵՐ

Այո, եթե զախաքիմ մասնակցի ԼՈՐԻ-ՋԱԻԱԽԵՐ ԵՐԳԱՆՆԵՐՈՒՄ ԶՕՐԱԿՐԻՑՄԱՆ.

Name: _____
Address: _____ City: _____
Province: _____ Postal Code: _____

Home Phone: _____ Cell Phone: _____
Business Phone: _____ E-mail Address: _____

I would like to donate:
 \$ 100
 \$ 250
 \$ 500
 \$ 1000
 Other: \$ _____

My donation is enclosed:
 Cash
 Cheque

Address:
Armenian Community of Montreal
"Lori - Javakheti" Committee
3401 Oliver-Aspell St.
Montreal, Quebec, Canada, H4J 1L5

ՕԳՆԵ ԼՈՐԻ ԵՒ ՋԱԻԱԽԵՐ ԵՐԳԱԳԻՐՆԵՐՈՒՄ

ՄՈՒՐ ԱՆԿԻՒՆԷՆ Նախանձելի՛ այս ժողովուրդս

— Նորէն երազել սկսար,— յանդիմանելու պէս հարցուց մուսաս, երբ այս առաւօտ անցայ գրասեղանիս առջեւ:

— Ի՞նչ երազել, երազելու ժամանակ չունիմ, չունի՛նք,— դիտել տուի խօսակիցիս, որ յամառօքէն շարունակեց.

— Հապա ի՞նչ է այդ «նախանձելի» բառը, որ կը տեսնեմ էջիդ մէջտեղը:

— Երազ չէ, իրականութիւն է, սիրելի՛ս,— յարեցի:

— Իսկ ինչպէ՞ս կը տեսնես այդ իրականութիւնը,— շարունակեց հարցապնդել մուսաս:

Փախուստ չունէի ձեռքէն: Պարտաւոր էի անաչառ ու աննախապաշար կերպով ցոյց տալ իրեն, թէ ինչո՞ւ նախանձելի կը գտնէի ժողովուրդիս կացութիւնը:

Առաջին հերթին մեր երկիրը՝ Հայաստանը ահա դարձած է աշխարհի ամենէն յառաջադէմ երկիրներէն մէկը, եթէ ոչ ամենէն յառաջադէմը: Ան խաղաղ կեցութեան ու գործակցութեան դաշնագիր կնքած է իր բոլոր դրացիներուն հետ, անոնք ալ արդէն իրեն վերադարձուցած են իր բոլոր պատմական հողերը՝ հիւսիսէն, արեւմուտքէն, հարաւէն թէ արեւելքէն: Իր նոր սահմաններով՝ ան կարեւորագոյն պետութիւնը կը հանդիսանայ Մերձավոր Արեւելքի մէջ ու իր ռազմավարական դիրքով կը յաջողի ոչ միայն կամուրջի դեր խաղալ կողմնացոյցի չորս կողմերուն միջեւ, այլեւ Եւրասիական ու Եւրոպական միութիւններն ալ իրարու կը շողկապէ:

Առեւտրական բոլոր ճանապարհները Հայաստանէն կ'անցնին, ըլլա՛յ «մետաքս»-ի, ըլլա՛յ սեւ ոսկիի, ըլլա՛յ մնացեալ բոլոր ապրանքատեսակներու: Բայց մանաւանդ մշակութային փոխանակումներն են, որ Հայաստանի միջոցաւ կ'իրականանան, անընդհատ զարգացնելով բարիդրացիական յարաբերութիւնները դարերով իրարու հակադրուած քաղաքակրթութիւններուն միջեւ:

Իր բազմաշնորհ մարդուսով, իր մտքի ճառագայթումով, Հայաստան ոչ միայն ի՛նք կը յառաջդիմէ անընդհատ, այլեւ մարդկութիւնն ալ կը բարձրացնէ իր հետ: Իր գիւտերը, իր հնարած նորանոր սարքերը կը տարածուին աշխարհով մէկ: Մրցակից չունի այլեւս,— նոպելեան մրցանակները միայն իր որդիներն ու դուստրերը կը խլեն: Իր համալսարանները մուտք գործելու համար աշխարհի բոլոր կողմերէն դիմում կատարող ուսանողները պոչ կը բռնեն: Համաշխարհային մարզական բոլոր հանդիպումներուն ոսկի, արծաթ ու անագապղինձ մետաղները միայն հայերը կը խլեն, ուստի միջազգային մարմինները ստիպուած են պղինձ, երկաթ ու կապար մրցանակներ ալ հաստատել, որպէսզի այլ ազգութիւնները չզրկուին պարգեւատրումէ: Իսկ արուեստներու եւ մշակութային այլ մարզերու մէջ այլեւս համաշխարհային չափանիշերը Հայաստանէն կը յառաջանան: Բոլոր սիմֆոնիկ մեծ նուագախումբերը կը ղեկավարուին հայ կամ Հայաստան ուսանած իմբավարներու կողմէ: Հայ արուեստագէտները կը տիրանան բոլոր մրցանակներուն:

Հայերը, որ սփռուած էին ամբողջ աշխարհի տարածքին, այժմ հաւաքուած են այնտեղ, արդէն աւելի քան երեսուն միլիոն համրանքով, բայց չեն հասնիր գոհացնելու պահանջարկը: Երկիրը ստիպուած է յաւելեալ մարդուժ ներածելու, որպէսզի կարենայ ստեղծել ու արտածել իր տնտեսական, արդիւնաբերական թէ մշակութային արտադրութիւնները:

Փոտխտը անհետացած է ոչ միայն Հայաստանէն, այլեւ իր ազդեցութեան ու պարտադրանքին շնորհիւ՝ բոլոր այն երկիրներէն, որոնք իր հետ առեւտրական թէ մշակութային կապեր կը պահպանեն: Մարդկային իրաւանց պաշտպան միջազգային կազմակերպութիւնը Հայաստան փոխադրած է իր կեդրոնական գրասենեակը՝ նկատի առնելով, որ այդ իրաւունքները ամենէն աւելի այժմ երկրին մէջ կը յարգուին: Նոյնը՝ կիններու իրաւունքներու պաշտպան ընկերակցութեան պարագային, քանի որ կինն ու մայրը հիմա Հայաստանի մէջ վերագտած են իրենց աւանդական, ազգային արժեւորումը՝ ամբողջական յարգանքի ու մեծարման արժանանալով այրերուն ու պետութեան կողմէ:

Ֆրանսախօս երկիրներու, անգլիախօս երկիրներու, ռուսախօս երկիրներու

թէ սպանախօս երկիրներու համայնքները իրենց կեդրոնատեղիները Երեւանի մէջ հաստատած են: Բայց տեղի պակասին պատճառաւ չինախօսները Վանի մէջ կըրցած են գրասենեակ ունենալ: Գալով մշակութային ժառանգութեան պահպանման, ՄԱԿ-ի ԻՒՆԵՍԿՕ բաժինը նոյնպէս Հայաստան փոխադրած է իր կեդրոնը, հաստատուելով Էրեւանի մօտակայքը:

Ստեղծուած է քրիստոնեայ երկիրներու հասարակապետութիւնը, կեդրոն ունենալով էջմիածինը, ուր դեսպանութիւններ ունին բոլոր միւս կրօններու կեդրոնական աթոռները:

Հայերէնը որդեգրուած է որպէս միջազգային հաղորդակցութիւններու գլխաւոր լեզու: Ստեղծուած է մէկ հայերէն, միջազգային հայերէնը՝ ընդունակելով արեւելահայերէնն ու արեւմտահայերէնը: Ունի մէկ ուղղագրածեւ, որ կը միացնէ բոլոր դարերու հայերէն գրելու լաւագոյն աւանդները: Համակարգիչները, ընկերային ցանցերը հայերէնով կը բացուին, յետոյ կարելի է այլ լեզուներ ընտրել: Հայերէնի ռեսուրսի տաղանապըր զգալի է բոլոր երկիրներուն մէջ, ուր իրենց տեղական լեզուին կողքին իւրաքանչիւր քաղաքացի պարտաւոր է հայերէն ալ սորվիլ: Ստեղծուած են յատուկ համակարգչային դասընթացներ փոխարինելու համար ուսուցիչներու անմիջական ներկայութիւնը:

Միլիոնքի նախկին հաստատութիւնները բոլորն ալ վերածուած են Հայաստանի դեսպանատներու եւ հիւպատոսարաններու՝ համակարգելու համար արտասահմանի երկիրներու պետութիւններուն եւ բնակիչներուն յարաբերութիւնները մեր երկրին հետ: Մեծ զարկ ստացած է դէպի հոն զբօսաշրջութիւնը, ու հայկական օդային գիծերը, որքան ալ որ նոր օդանաւերով հարստանան, չեն հասնիր պահանջը գոհացնելու, իսկ արտասահմանեան ընկերութիւնները նոյնպէս իրենց օդատորմիղը տեւաբար ընդլայնելու վրայ են այդ ուղղութեամբ:

Միջազգային չափորոշիչներու համաձայն, Հայաստանը կը նկատուի աշխարհի լաւագոյն վայրը մարդավայել ապրելու համար: Մարդու կողմէ մարդու շահագործումները, բռնաբարումները եւ բոլոր անարդարութիւնները անհետացած են այստեղ երկա՛ր ժամանակէ ի վեր: Նաեւ Հայաստանը ամենէն մաքուր երկիրն է մթնոլորտի բերեղացման տեսակէտէն: Իր ազդեցութեան շնորհիւ, շրջապատի երկիրներու ալ իրավիճակը սկսած է բարելաւուիլ: Մեծ պետութիւններու ղեկավարները, պետական գործիչները, գիտնականներն ու դաստիարակները միշտ կապի մէջ են Երեւանի հետ, ըլլա՛յ բնութեան պահպանման, ըլլա՛յ բնակչութեան կրթութեան ու դաստիարակութեան տեսակէտէն քայլ պահելու համար վերջին միջոցառումներուն հետ:

— Արթնցի՛ր, արթնցի՛ր:

Ընդոստ, բացի աչքերս: Կարծեցի մուսաս էր: Սխալեր էի: Բաֆֆին էր, մեծ վիպագիրը, որ իր ատենին երեւակայած էր ապագայ Հայաստանը:

— Արդէն իրականացա՞ն այդ բոլորը: Ես կ'ըսէի, որ երկու հարիւր տարուան պէտք ունէինք:

— Նայէ օրացոյցին,— ըսի մեծ վիպագիրին,— շատ բան չէ՛ մնացեր, որ երկու հարիւր տարի ըլլայ «նենթ»-իդ երազին վրայ: Ե՞րբ դրած էիր այդ վէպը. առանց քեզի գժուար թէ, հոս հասած ըլլայինք:

— Չեմ յիշեր, Կուկլըին հարցուր:

— Այո՛, Կուկլը բաց ու տես «նենթը» ե՞րբ գրուած է, ճայնակցեցաւ մուսաս, որ մինչ այդ լուռ կը հետեւէր գրածիս:

Փորձեմ, ըսի, նայինք լոյս ընծայման տարին նշուած է:

— 1881:

Վիքիպեդիան է ըսողը:

— Իսկ քու օրացոյցը ի՛նչ ցոյց կու տայ,— ըսաւ ու Բաֆֆին հետ անհետացաւ մուսաս՝ զիս մինակ ձգելով կապոյտ պաստառիս առջեւ:

Մինա՞կ...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

CIBC



Aline Shnorhokian
Mortgage Advisor

Tel: 1 866 231-8876
Fax: 450 688-7555
Cell: 514 797-1375
aline.shnorhokian@cibc.com

Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7



ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aaarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!

NISSAN | VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS | HONDA

GABRIEL | Kevork Asadourian | GABRIEL

Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned

kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél. : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

★ **École De Conduite**

AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur | Instruction Automatique ou manuelle

AUTOECOEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan



NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel: (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available in Armenian, Arabic, English and French

BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON



MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.



ՀԱՅԿ ԽԱՐԹՈՒՆԻԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR MARIE-CLAIRE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal | Tél: 514.334.7830

«ՈՒՒՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ»

Կիրիկիոյ Կաթողիկոսութեան Սիսե Անթիլիաս Փոխադրութիւնը

ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Եռհաննէս Լեփսիուս իր «Հայաստանի Զարգերը» գիրքին մէջ⁷⁰⁶, Կիրիկիոյ յատկացուած էջերուն սկիզբը այս նշումը ունի. «Կիրիկիոյ (Ատանայի վիլայէթ եւ Մարաշի սանճաք) հայ ազգաբնակչութեան տարագրութիւնը կը սկսի այն դէպքերով, որոնց թատր կ'ըլլայ Ձէյթուն»⁷⁰⁷:

Ձէյթունի հայաթափումը սկսած է 1914-ի Սեպտեմբերի⁷⁰⁸, թէ աւելի ուշ:

Սահակ Կաթողիկոսի առ Ձաւէն Պատրիարք 3 Մարտ 1915 թուակիր նամակը միայն արձանագրած է ստուգութիւնը, թէ Ձէյթունի առնչաբար «մեծ դժբախտութիւն մը կը սպասէ» հայութեան⁷⁰⁹: Կաթողիկոսին նախատեսութիւնը՝ «հարուած» մըն էր: Ենթադրելի է, թէ զինուորական հարուածի մը հաւանականութիւնը խորհած էր ան, բայց ոչ՝ տեղահանութեան: Արդարեւ, Ձէյթունի «էջգիր»ներու «անխոհեմ արարք»ին վրայ, 1914-ի Օգոստոսին վերջերը Մարաշի միւթէսարքի Հայտար փաշա Ձէյթունի ճամբան բռնած էր 600 զինուորներով⁷¹⁰, հովանիին տակ մեծաքանակ ռազմամթերքով՝ մօտ ու հեռու կեդրոններու մէջ հաւաքուած զինուորներուն⁷¹¹: Փաշան Սեպտեմբերին նախ պահանջած էր 25-30 հայ երիտասարդներուն յանձնումը: Անոնք ձերբակալուած էին: Խարբայ իշխանաւորը այդքանով էր գոհացած եւ պահանջած էր զէյթունցիներուն քով մնացած զէնքերը: Չարչարաններու տակ հաւաքուած էին «ամենաընտիր զէնքեր»ը եւ «բազմաթիւ հասարակ հրացաններ»⁷¹²: Այս «աղբխարչ ողբերգութեան առա-

ջին արարուած»ին առնելով՝ դեռ տեղահանութեան ուրուականը շրջելու չէր ելած: 1915-ի Մարտին, Ձէյթունի գորանոցի զինուորներուն թիւը 5000-ի բարձրացած էր⁷¹³: Դարձեալ «էջգիր»ներու նոր պատմութիւն մը: Բայց մինչ նախորդը հրոսակներու պատմութիւն մըն էր, այս մէկը՝ ըմբոստներու: Ապրիլին տեղահանութեան բռնութիւնը ծայր կ'առնէր, եւ արագօրէն՝ նոյն ամսուայ վերջաւորութեան իսկ՝ «Ձէյթունի գիւղերը իրարու ետեւէ կը պարպուէին»⁷¹⁴:

1915-ի 7 Ապրիլին, Ձաւէն Պատրիարքին ուղղած իր նամակով Կաթողիկոսը յայտնած էր. «Աւելուած տեղեկութիւնք ցոյց կու տան, որ ամբողջ Ձէյթունը պիտի դատարկուի, թեւեւ իսլամ գաղթականներ բերեն, եւ կամ բողոքովին այրեն»⁷¹⁵: Ու աւելցուցած՝ «խօսքեր կան, թէ նոյն չարիքը պիտի հասնի նաեւ Հաճընի եւ Հասան Պէյլիի»⁷¹⁶: 15 Ապրիլ թուակիր նամակով ալ՝ «նոր ցաւեր պիտի յաջորդեն տակաւին. Մարաշ, Այնթապ եւ Քիլիս նոյն բախտին ենթարկուելու հաւանականութիւն կայ»⁷¹⁷: Իսկ 4 Մայիսին ալ պիտի արձանագրէր. «ամենուս վախճանն է, տառապանք եւ քարոզ»⁷¹⁸: Մայիսի երկրորդ կիսուն, Ձէյթուն ամբողջովին պարպուած էր: Բազմութիւններ Գոնիայի եւ Էրէյլի մէջտեղը տարածուած Քարա Բունարի եւ Սուլէյմանիէի ճախճախուտ մարզերը զրկուած էին, եւ աւելի մեծ բազմութիւններ՝ դէպի Տէր Զօր, Եփրատի վրայ, Միջագետքի տափաստանը⁷¹⁹:

Ձէյթունի տեղահանութիւնը «լաւ ճամբու մէջ էր արդէն», երբ Չորք Մարգպանի պարպումը ծայր առած

էր⁷²⁰: «Չորաշուք երեւոյթներ» Չորք-Մարգպանի հայութեան վրայ յածիլ սկսած էին 1914-ին: Չորապոչի պահանջքը մեծ վախ մը յառաջացուցած էր: Չորք-Մարգպան կը նախագար, թէ իր երիտասարդները զինուորական իշխանութեան յանձնելու պարագային՝ սպառնալից «նորանոր պահանջներու» առջեւ պիտի դանդաղէր⁷²¹: Եւ ճարհատ կը խորհէր, թէ ի՞նչ ընէր: Ըմբոստութեան ոգին առջեւ կը շարժէր, քանի որ կը տիրապետէր նախագագուած, թէ «թրքական իշխանութեան նպատակն ուրիշ բան չէր, եթէ ոչ Տէօթ-Յօլի հայութեան ուժը ցրուել»⁷²²: Թուրք իշխանաւորներուն ակառճը կը հասնէր «ապստամբական հոսանքի շուկը»: Անոնք յանկարծ կը բանաձեւէին «աւելի մեղմ» հրաման մը, թէ պահանջուածը զինուորական ծառայութիւն չէր, այլ՝ բանուորական բանակի մը կազմութիւնը, թէ երիտասարդները պիտի երթային Օսմանիէի շրջանը, Ամանոսեան լեռներու ստորոտը, լեռնուղիի մը շինութեան եւ ճամբաներու նորոգման համար ու ամսականներով պիտի վարձարուէին: Խորամանկութիւնը «կը պահուէր կատարեալ յաջողութեամբ»⁷²³: Միայն տասնեակ մը երիտասարդներ պիտի ըմբոստանային, սակայն յանգելու համար տիւրը վախճանի մը⁷²⁴: Ապա Չորք Մարգպանի ոչ միայն երիտասարդութիւնը պիտի հաւաքուէր, այլեւ ամբողջ տղամարդիկը. անոնք «գանապարհաշինական պատրուակով: Այրեւրու մեկնումէն յետոյ, կիներն ու մանուկները դէպի Տէր Զօր պիտի տարագրուէին, գրած է Լեփսիուս»⁷²⁵: Չապէլ Եսայեան յիշած է, թէ կիներն ու մանուկները Հալէպ եւ շրջակայքը պիտի զրկուէին⁷²⁶: Երկու տեղեկութիւնները պարզապէս զիրար կ'ամբողջացնեն: Չորք Մարգպանէն ետք, Ատանայի վիլայէթին եւ Հալէպի վիլայէթի Կիրիկեան կամ մերձ-Կիրիկեան հայաբնակ վայրերը Ապրիլ, Մայիս, Յունիս, Յուլիս ամիսներու ընթացքին պիտի պարպուէին⁷²⁷:

Եսայեանի տեղեկութեամբ՝ Կիրիկիոյ գանազան վայրերու տեղահանութիւնը յաջորդաբար տեղի ունեցած էր: Մարաշ եւ իր շրջակայքը, Ատանա, Մերսին, Սիս գրեթէ նոյն պայմաններու մէջ զրկուած էին իրենց տունէն, տեղէն, իրենց աշխատութեամբ եւ ժրջանութեամբ ձեռք բերած հարստութենէն եւ բարեկեցիկ կեանքէն: Հարուստները հաւաքուած էին Հալէպ եւ շրջակայքը, բայց անոնք որ որեւէ միջոց չէին ունեցած իրենց ծննդավայրէն գուրս ապրելու՝ կառավարութիւնը անոնց «բեռ»էն ազատելու համար դէպի Միջագետք զրկած էր⁷²⁸:

Հաճընը: Այնթապը:

Կիրիկիոյ ոչ մէկ քաղաքին կամ գիւղին խնայուած էր, եւ գրեթէ միշտ՝ Սուրիա տեղահանութեամբ:

Այն առնելով, միաժամանակ արեւելեան Եւրոպայէն թուրք գաղթականներ բերուած էին հայերէ դատարկուած քաղաքներն ու գիւղերը: Եւ անոնք իւրացուցած էին հայերուն տուններն ու գործատեղիները, պարտէզներն ու այգիները, արտերն ու ագարակները⁷²⁹:

«Կիրիկիոյ հայոց տեղահանութիւնը ներքին գաւառներու բազմամասնաբաշխումը, գրած է Բիւզանդ Եղիայեան, աւելի ուշ տեղի ունեցաւ»⁷³⁰: Ապա՝ ու-

չացումին համար հետեւեալ պատճառները ենթադրած է. 1) Թուրք երեւելիներէ ոմանց առարկութիւնը՝ թէ հայ ժողովուրդի տեղահանութեամբ պիտի քայքայուէր երկրին տնտեսութիւնը, մանաւանդ դաշտային բերքահաւաքի ամիսներուն: 2) Հայերուն կողմէ ապստամբական շարժումի մը բռնկումի պարագային, Կիրիկիոյ ծովեզերեայ դիրքին պատճառով՝ արեւմտեան պետութիւններու կողմէ արագ միջամտութեան կարելիութիւնը: 3) Կիրիկիայէն մինչեւ ամբողջ արաբական նահանգներու պատերազմական դաշտին ընդհանուր հրամանատար՝ ձեմալ փաշայի բարեացակամութիւնը, որովհետեւ ան Ատանայի վիլայէթի վալին էր եղած եւ բարեկամական կապեր ունեցած բազմաթիւ հայերու հետ: Ըստ Եղիայեանի, ձեմալ փաշայի բարեացակամ վերաբերմունքին հետեւանքով՝ Կիրիկիոյ հայերէն շատեր կրցած էին Սուրիոյ եւ Պաղեստինի «աւելի ապահով» շրջանները տեղաւորուել: Պատմագիրը նաեւ հաստատած է. «Ասիկա չի նշանակեր սակայն՝ թէ ձեմալ փաշան ընդհանրապէս բարեացակամ էր հայ ժողովուրդին հանդէպ. ո՛չ երբեք. եւ ապացոյցը այն է՝ թէ ի՞ր հրամանատարութեան ներքեւ գտնուող հողամասերուն վրայ էր, որ ծրագրեալ կերպով փճացուեցաւ հայ գաղթական ժողովուրդը, Հալէպէն մինչեւ Մէսքէնէ ու Իսա-իւլ-Այն ու Տէր Զօր, Եփրատի սղմուտ գետի եզերքին»⁷³¹:

ԳԱՌՆԻԿ ԱՆ. Ք. Գ.

ԱՂԲԻԻՐՆԵՐ ԵՎ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

706.- Եռհաննէս Լեփսիուս, Հայկական Զարգեր/Տեղեկագիր, Թարգմանիչ՝ Ս. Ձաւէն, Մատենաշար «Ազգակ» թիւ 98, Պէյրութ, 1965: Յետ այսու՝ ԼՀՋ:

707.- Ն, է 12:

708.- Խաչատուր Դադայեան, Կիրիկիայի Հայոց Յեղասպանութիւնը, Իրատես, Յուլիս 1-3, 2014, է 7:

709.- ԼՀՋ, է 14:

710.- ԱԶՍ, է 12:

711.- Ն, է 13:

712.- Ն, է 15:

713.- Ն, է 21:

714.- Ն, է 28, 29:

715.- ԿԿ, է 145:

716.- Անդ:

717.- Ն, է 156:

718.- Ն, է 164:

719.- ԼՀՋ, է 15:

720.- Ն, է 18:

721.- ԽԶՄ, է 96-97:

722.- Ն, է 97:

723.- Անդ:

724.- Ն, է 98:

725.- ԼՀՋ, է 18, 19:

726.- Չապէլ Եսայեան, Կիրիկիոյ Տեղահանութիւնը. Ձէյթուն, Տէօթ-Յօլ (Չորք Մարգպան), Հաճըն, Այնթապ, Պատմաբանասիրական Հանդէս, թիւ 1, 2017, է 147:

727.- ԼՀՋ, է 19:

728.- Տե՛ս Եսայեանի յօդուածը, Պատմաբանասիրական Հանդէս, թիւ 1, 2017, է 151:

729.- ԿԿ, է 176:

730.- Բիւզանդ Եղիայեան, Ատանայի Հայոց Պատմութիւն, Անթիլիաս, 1970, է 339:

731.- Ն, է 339-340:

CAMP D'ÉTÉ ARARAT
Ս. Յակոբ Եկեղեցւոյ Ամառնային
"Արարատ Ճամբար"-ը
Պահանջքը ունի

Վարիչներու եւ քարտուղարի՝
18 տարեկան եւ աւելի
Օգնա կան Վարիչներու՝
16-17 տարեկան

Ն ա խ ա պ ա յ մ ա ն ն է ր .
Ըլլալ հայախօս եւ ուսանող:
Ըլլալ տրամադրելի Յունիսի 26-էն մինչեւ Օգոստոսի 10-ը:
Ունենալ աշխատանքի փորձառութիւն տուեալ պաշտօնի ծիրէն ներս:
Յուցաբերել պատասխանատուութեան գիտակցութիւն եւ նախաձեռնութեան ոգի:
Ծրագիրներ որոնելու եւ ճամբարականներուն հետ գործադրելու կարողականութիւն:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի առաքել իրենց անձնական գրատեղեկանքը (CV) հետեւեալ հասցէին՝
camp.ararat@campdetesourphagop.com
մինչեւ 9 Մարտ 2018

Camp d'Été ARARAT - 3400 Rue Nadon, Montréal, QC. H4J 1P5
Tel: (514) 332 - 1373 #228

Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը / Visit our new website
www.arsarmenianschool.ca

ԳՐԱԻՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

ՀՄԸՄ Գանատա - 100-ամեակ
Օնթարիո եւ Փեյկեզ
 23 կամ 25 նոյեմբեր 2018

Համագրգայինի 90 ամեակի ձեռնարկներ՝
 Մոնթրեալ 14 Հոկտեմբեր 2018
 Թորոնթո 27 եւ 28 Հոկտեմբեր 2018
 Կը խնդրուի չխաչաձեւել

ԼԱԻԱԼ

ՀՕՄԻ «Շուշի» մասնաճիւղի
Փոքրերու Մաղկագարդ (Ժուէլ)
 Շարաք, 24 Մարտ 2018

ՀՄԸՄ ԼԱԻԱԼ

Մարզական եւ Սկաուտական արձանագրութիւններ
 ամէն երեկոյեան ժամը 7-8
 հեռաձայնել 514 979-6272 եւ 514 295-3245 թիւերուն
 Homenetmen Laval Դիմատետրի (Facebook) էջով

ՀՄԸՄ Գանատայի Շրջանի 48-րդ Մարզական խաղեր
 Լաւալ 2018
 Նուիրուած ՀՄԸՄ-ի Հիմնադրութեան 100-ամեակին

ԹՈՐՈՆԹՕ

Հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տէր Բարգէն Արքեպիսկոպոս Չարեանի, Պենիմիոս Օ'Րուրիի «Թափուած Գանձ» Գտնել՝ Լուս Աղօթքի Համբարձման» գրքի հայերէն նոր լոյս տեսած թարգմանութեան շնորհանդէսը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի 1 Մարտ 2018-ի երեկոյեան ժամը 8.00-ին Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Յովնանեան» սրահէն ներս, Թորոնթո: Գիրքը՝ որ թարգմանութիւնն է Բրշ. Կարօ Սրկ. Նոխտտեանի, պիտի ներկայացնէ Գերշ. Գեղարդ Մայրապոյն Վարդապետ Գիւսպէկեան՝ Առաջնորդական Փոխանորդ Գանատայի Հայոց Թեմին: Հրատէր՝ բոլորին:

ԺՈՂՈՎՆԵՐ

ՀՕՄ-Ի ՄՈՆԹՐԵԱԼԻ «ՍՕՍԷ» ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ԱՆԳԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Երեքշաբթի, 6 Մարտ 2018-ին: Երեկոյեան ժամը 7:30ին հիւրասիրութիւն, 8:00-ին՝ ժողով:

ՀՕՄ-Ի ԼԱԻԱԼԻ «ՇՈՒՇԻ» ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ԱՆԳԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Զորեքշաբթի, 7 Մարտ 2018-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Լաւալի Հայ կեդրոն:

ՀՕՄ-Ի ԹՈՐՈՆԹՈՅԻ «ՌՈՒԲԻՆԱ» ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ԱՆԳԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Երեքշաբթի, 6 Մարտ 2018-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Թորոնթոյի Հայ կեդրոն:

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«ՀՈՐԻԶՈՆ» որբել ձեւով եւ որբել ժամանակ պատասխանատու չէ լոյս տեսած ծանուցումներու բովանդակութեան:
 «ՀՈՐԻԶՈՆ» իրաւունք ունի ընդունելու կամ մերժելու որբել ծանուցում կամ յայտարարութիւն:
 ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐԸ Կ'ընդունինք միայն գրաւոր, որոնք խմբագրութեան պէտք է յղուին թերթի լոյս ընծայման ժամկէտէն առնուազմ 7 օր առաջ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

«Հորիզոն»-ի յղուած թղթակցութիւններն ու յօդուածները պէտք է գրուած ըլլան ընթեռնելի ձեւագիրով, նախընտրաբար մեքենագրուած կամ Ե-մամակի մեր հասցէին յղուած: Անստորագիր եւ առանց հասցէի գրութիւնները նկատի չեն առնուիր: Խմբագրութեան յանձնուած նիւթերը հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր: Հրատարակուած յօդուածներու մէջ տեղ գտած կարծիքները անպայմանօրէն չեն ներկայացնիր խմբագրութեան տեսակէտը: Յապաղած թղթակցութիւնները չեն հրատարակուիր: Բոլոր թղթակցութիւնները ենթակայ են խմբագրման եւ վերամշակման: Ստացուած յօդուածներն ու թղթակցութիւնները հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը վերապահուած է խմբագրութեան:

horizon
HORIZON
 Hebdomadaire arménien
Armenian Weekly
 Publié par / Published by
Les Publications Arméniennes
 (1991)
 3401, Olivar-Asselin
 Montréal, Québec
 Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription Canada
 2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
 1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
 1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
 1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
 Sylva Eshramdjian-Bachekjian
(General Manager)
 Tél.: (514) 332-3757
 Télécopieur/Fax (514) 332-4870
 E-Mail: sylvia@horizonweekly.ca
 Courrier de deuxième classe
 /No. 40065294 / Second class mail
 Dépot légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
 Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Վարիչ Խմբագիր՝
 Վահագն Գարազաշեան
Վարչական պատասխանատու՝
 Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր՝
 Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-համեան, Թիմա Սիլվահեան
Չեւաղորդման՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թիթիկեան

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

ALINE BEKEREJIAN
 NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ Ալին Պեքերեճեան

| | | |
|---------------|-------------------|-------------------|
| Achat | Մուտնոր | Purchase |
| Hypothèque | Մշարժ Կալուածք | Mortgage |
| Refinancement | Վերաֆինանսաւորում | Refinance |
| Mandat | Պատուիր | Mandate |
| Testament | Կտակ | Will |
| Succession | Կալուածք | Estate |
| Marriage | Սննամուրթիւն | Marriage |
| Procurator | Փոխաւորագիր | Power of Attorney |

180, rue Fleury ouest
 Montréal, Qc, H3L1T5
 T 514.382.7222
 F 514.381.1818
 aline.b@notarius.net
 www.abnotaires.com

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
 Services offered in Arabic, Armenian, French and English.

Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Գայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

Այցելեցէք Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ կայքէջը՝
www.sourphagop.net

L'ÉCOLE ARMÉNIENNE SOURP HAGOP
 ÉCOLE PRIMAIRE V. ET A. SARAFIAN
 ÉCOLE SECONDAIRE PASDERMAJIAN

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ
 ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆ
 Վ. ԵՎ Ա. ՍԱՐՖԻԱՆ ԱՊՏԱՐԱՐԱՆՆԵՐ
 ՔԱՐՏԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՂԱԿԱՆ

Տնօրէնի կամ Տնօրէնուհիի կարիք
 Հիմնուած 1974-ին, Սուրբ Յակոբ Ազգային վարժարանը իր մանկապարտէզով, «Վարդգէս եւ Աստղիկ Մարաֆեան» նախակրթարանով եւ «Բասարմաճեան» երկրորդականով, ուսում կը ջամբէ աւելի քան 700 աշակերտներու ըստ Քեպէք Նահանգի կրթական նախարարութեան ծրագրին, ունենալով հայ լեզուի, պատմութեան եւ մշակոյթի ուսուցումը որպէս անբաժան մասնիկ ընդհանուր դաստիարակութեան:

Պաշտօնի ամփոփ նկարագրական
 Համարատու ըլլալով Վարչական խորհուրդին, տնօրէնը կամ տնօրէնուհին կը կազմակերպէ վարժարանի առաքելութեան համապատասխան կրթական զարգացում ապահովող անհրաժեշտ աշխատանքներ, գործակցելով Տնօրէնութեան վարչակազմին եւ ուսուցչական կազմին հետ:

Պահանջուած որակական պայմաններ
 -Տեսլական ի նպատ վարժարանի յառաջիակազմին:
 -Բացառապէս վարժարանի կարիքներուն. վարչական, կրթական, մարդու իրաւունքներու նկատմամբ առաջարկներու ներկայացում Վարչական Խորհուրդին:
 -Մանկավարժական մօտեցում եւ փոխյարաբերութիւն տարբեր կարիքներ ունեցող ընտանիքներու եւ աշակերտներու հետ:
 -Նախանձախնդրութիւն վարժարանի վերելքին նկատմամբ:
 -Ծանօթութիւն վարժարանի պատմութեան:
 -Համագործակցութիւն համայնքի կառոյցներու հետ:

Ուսում եւ Փորձառութիւն
 Թեկնածուն պէտք է
 • Ունենայ նուազագոյնը մագիստրոսի վկայական կրթութեան ծիրէն ներս
 • Ունենայ նուազագոյնը 8 տարուան փորձառութիւն վարժարանէ մը ներս, որոնցմէ, նախընտրաբար, 3 տարին որպէս տնօրէնութեան վարչակազմի անդամ:
 • Տիրապետէ հայերէն եւ ֆրանսերէն լեզուներուն

Աշխատանքային պայմաններ
 Լիաժամ, մրցունակ աշխատավարձ, պաշտօնի ստանձնում 1 Օգոստոս 2018-ին: Դիմումագրի ժամկէտ 23 Մարտ 2018

Հաճեցէք պաշտօնի դիմումագիրը եւ ինքնակենսագրական ուղարկել դպրոցի Վարչական Խորհուրդին հետեւեալ էլ-հաղէին.-
 CA@ecolesourphagop.com.



TRACTION INTÉGRALE INTELLIGENTE
SANS FRAIS* SUR LES MODÈLES SÉLECTIONNÉS
 (UNE VALEUR MAXIMALE DE 2 200 \$)

à l'achat au comptant ou au financement à l'achat à un taux standard par l'entremise de NCF.

FAITES VITE!
 SE TERMINE LE 28 FÉVRIER.

ROGUE MANIA



Rogue SL illustré



ROGUE

VUS #1 AU QUÉBEC EN 2017

LOCATION À PARTIR DE **257 \$** PAR MOIS,
 AVEC COMPTANT INITIAL DE 2 495 \$.

C'EST COMME PAYER **59 \$** /SEM. PENDANT **39** MOIS | SUR LE ROGUE S 2018 À TRACTION AVANT

OU

OBTENEZ LA **TRACTION INTÉGRALE INTELLIGENTE**
SANS FRAIS* SUR LES MODÈLES SÉLECTIONNÉS.
 (UNE VALEUR MAXIMALE DE 2 200 \$.)

UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**,
 AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**



Qashqai SL Platine illustré

QASHQAI



VUS SOUS-COMPACT DE L'ANNÉE



VUS COMPACT

LOCATION À PARTIR DE **239 \$** PAR MOIS,
 AVEC COMPTANT INITIAL DE 2 295 \$.

C'EST COMME PAYER **55 \$** /SEM. PENDANT **39** MOIS
 ___ SUR LE QASHQAI S 2018 À BOÎTE MANUELLE ___

OU

OBTENEZ LA **TRACTION INTÉGRALE INTELLIGENTE**
SANS FRAIS
 SUR LES QASHQAI 2017.
 (UNE VALEUR MAXIMALE DE 2 200 \$.)

UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**,
 AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**

*Des conditions s'appliquent. Taxes en sus. Offre d'une durée limitée et applicable uniquement sur les modèles sélectionnés et sujettes à changements ou annulation sans préavis. Visitez Nissan Gabriel Jean-Talon ou Nissan Gabriel Anjou pour les détails.

NISSAN
GABRIEL
 JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8
 514 509-7777 | nissangabrieljeantalon.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

NISSAN
GABRIEL
 ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7
 514 324-7777 | nissangabrielanjou.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩



BARRY



KAREN



GARO

KAZANDJIAN



514

333-3000

DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

12345, Beauséjour



RÉCEMMENT VENDU

3940, Bélanger



RÉCEMMENT VENDU

3061, rue Jean-Bouillet



À VENDRE 379 000 \$

3740, Pierre-Davault



À VENDRE 3 388 000 \$

2286, Kaufman



À VENDRE 349 000 \$

9033, Boul. Gouin O.



À VENDRE 1 950 000 \$

12211, Green Lane



À VENDRE 1 378 000 \$

12445, Av. Joseph-Edouard-Samson



À VENDRE 1 588 000 \$

83, des Roseaux



À VENDRE 1 198 000 \$

1533, Alexis-Nihon



À VENDRE 499 900 \$

4105, Claude-Henri-Grignon



À VENDRE 2 988 000 \$

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIERIS RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5